

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1950 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐԿՎՈՂ ԱՐՔԱ ՎՃԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից գործարկվող ԱՐՔԱ վճարային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից կատարված անկանխիկ եղանակով վճարումներից շահառուներին հետվճար տրամադրելու (նշանակելու և վճարելու) հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն սույն որոշման N 1 հավելվածով սահմանված իմաստները:

II. ՀԵՏՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

3. Հետվճարը հաշվարկվում է միջոցառմամբ սահմանված չափով:

4. Հետվճարը վճարվում է («Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի հանձնարարականի հիման վրա բանկի միջոցով շահառուին փոխանցվում է) յուրաքանչյուր ամիս ինքնաշխատ եղանակով՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 25-րդ օրը: Հետվճարը վճարվում է անկանխիկ եղանակով՝ շահառուի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Հետվճարները հաշվարկվում է «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն՝ 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կատարված անկանխիկ գործարքներից: Հետվճարը վճարում է «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի հանձնարարականի հիման վրա շահառուի համապատասխան հաշիվը սպասարկող առևտրային բանկը՝ 2026 թվականի փետրվար ամսից մինչև

2027 թվականի հունվար ամիսը ներառյալ: Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարությունը և «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն յուրաքանչյուրն իրենց մասնաբաժինը փոխանցում է բանկի տարանցիկ հաշվին, որից հետո բանկը, հիմք ընդունելով «Արմենիան Քարդ» ՓԲԸ կողմից տրամադրված հաշվետվությունը, փոխանցում է հետվճարը յուրաքանչյուր շահառուին:

6. Նախորդող ամսում կատարած անկանխիկ վճարումների գործարքների ծավալները հաշվարկում է «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն՝ հաշվարկից բացառելով այն գործարքները, որոնց գծով չի ձևավորվում հետվճար:

Մասնավորապես, հետվճար չի ձևավորվում հետևյալ գործարքներից՝

- 1) տեղեկատվության, կապի և կոմունալ ծառայությունների դիմաց վճարներ,
- 2) ՀՀ պետական և համայնքների բյուջեների օգտին կատարվող վճարումներ,
- 3) բարձր ռիսկային վաճառակետերում կատարված գործարքներ («Մեծահասակների համար նախատեսված բովանդակության», «Ծանոթությունների կայքերի և հարթակների», «Խաղատների և խաղային ծառայությունների», «Կրիպտո փոխանակման, կրիպտո դրամապանակների և այլ կրիպտո ծառայությունների», «Թվային ֆայլերի պահեստավորման և հեռակա օգտագործման ծառայությունների», «Ազատային խաղերի», «Բարձր ռիսկային ֆինանսական առևտրային հարթակների», «Հեռախոսային մարքեթինգային ծառայությունների», «Ավտոմատ երկարաձգվող բաժանորդագրությունների», «Թանկարժեք մետաղների և քարերի առուվաճառք» սպասարկման կետերը, բացառությամբ՝ Դեղատների),

4) ֆինանսական կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայությունների դիմաց ֆինանսական հաստատության օգտին գանձվող ցանկացած վճարումների և գործարքների,

5) ԱՐՔԱ նվեր և մեկանգամյա օգտագործման համար նախատեսված քարտերով կատարված գործարքների,

6) Ստացված հետվերադարձը, փոխհատուցումը և հետգանձումները: Ընդ որում, հետվերադարձների, փոխհատուցումների և հետգանձումների հիմքում ընկած գործարքների դիմաց նախկինում վճարված հետվճարները նվազեցվելու են ընթացիկ ամսվա ընթացքում վճարվելիք հետվճարներից:

7. «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (Սի-Բի-Էյ-Նեթ ֆինանսական տեղեկատվության փոխանակման համակարգ), ինչպես նաև «Արմենիան Քարդ» ՓԲԸ և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկված էլեկտրոնային հաղորդագրության միջոցով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն է տրամադրում հետվճարի շրջանակներում շահառուների կողմից տվյալ ամսում կատարված անկանխիկ վճարումների գործարքների ծավալների վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը: Ընդ որում, սույն կետով սահմանված Հաշվետվությունը ներառում է յուրաքանչյուր շահառուի կողմից իրականացված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն՝ շահառուի անձնական տվյալների ապանձնավորմամբ: Մասնավորապես, «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն յուրաքանչյուր շահառուին վերագրում է գաղտնագրված յուրահատուկ նույնականացման համար, որի միջոցով կազմում է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրման ենթակա Հաշվետվությունը՝ առանց ՀՀ ֆինանսների նախարարությանը գաղտնագրման բանալիները տրամադրելու:

1) Սույն կարգի 7-րդ կետում նշված տվյալները «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը մեկից ավելի անգամ տրամադրելու դեպքում հիմք է ընդունվում սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված վերջին տվյալը:

8. Հաշվետու ամսվա ընթացքում ձևավորված հետվճարի տրամադրման համար անհրաժեշտ Հաշվետվությունը «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից տրամադրվելուց հետո Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը փոխանցում է հաշվետու ամսվա ընթացքում ձևավորված հետվճարի գումարի 50%-ը, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված եկամտային հարկը՝ անկանխիկ փոխանցմամբ, «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված՝ շահառուի համապատասխան հաշիվը սպասարկող առևտրային բանկում բանկային հաշվին մինչև տվյալ ամսվա 20-ը՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածով նախատեսված բանկային հաշիվների: Վճարման ցուցակում հետվճարի

գումարները կլորացվում են մինչև միավոր: Վճարման ցուցակ չեն ներառվում համադրման օրվա դրությամբ մահացած շահառուների տվյալները:

9. «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հետվճարը պետական բյուջե չի վերադարձնում, բացառությամբ սույն կետում նշված դեպքերի: Բանկային հաշիվը փակված լինելու կամ տեխնիկական պատճառներով բանկային հաշվին չփոխանցելու դեպքում գումարը բյուջեից շահառուի բանկային հաշվի փոխանցման գործարքի մերժում ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ, շահառուի դիմումի հիման վրա հետվճարի գումարը շահառուի այլ բանկում գործող բանկային հաշվին՝ բանկային փոխանցման միջոցով: Հետվճարը բանկին փոխանցելու ամսվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում չվճարելու դեպքում բանկը «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից ստացված հանձնարարականի հիման վրա գումարը վերադարձնում է պետական բյուջե՝ միաժամանակ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրելով վերադարձի վերաբերյալ տվյալներ: Սույն կետում նշված 6-ամսյա ժամկետից հետո հետվճարը վճարման ենթակա չէ:

10. Բանկային հաշիվը փակված լինելու կամ տեխնիկական պատճառներով բանկային հաշվին չփոխանցված հետվճարի գումարը բանկին փոխանցելու ամսվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում շահառուին վճարելու դեպքում այդ մասին վճարման ամսվան հաջորդող ամսվա ընթացքում «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

11. Հետվճարի վճարելուն առնչվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով և այլ նորմատիվ իրավական ակտերով, շահառուի ու բանկի միջև կնքված՝ բանկային հաշվի պայմանագրով, ՀՀ ֆինանսների նախարարության և Արմենիան Քարդ ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ